ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 55
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
30-ը նոյեմբերի 2021թ.

Նիստն ացկացվել է առցանց zoom.us հարթակում, մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը նախագահում էր գիտական խորհրդի նախագահ Ա.Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր գիտական քարտուղար Մ.Ս.Աթոյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը:

1. Հաղորդում 2021թ.-ի ընդունելության արդյունքների մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան /**
2. ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան /**

3. Ընթացիկ հարցեր:

3.1. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման(ԿԲԴՎ) բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան /**

3.2. ԵՊՀ ԻՄ-ի փաստաթղթաշրջանառության կարգը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան /**

3.3. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան /**

3.4. ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին: /
Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան /**

3.5. ԵՊՀ ԻՄ –ի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին:
/ Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար **Մ. Աթոյան /**

3.6. Ջ.Լ.Սրապիոնյանի և Ա.Ա.Թադևոսյանի «**Օգնություն դիմորդին**» (Մաթեմատիկայի պետական ավարտական միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան 1,2-ի արտահայտությունների ձևափոխությունների և արժեքների հաշվման խնդիրների լուծման ուղեցույց

խնդրագիրք) ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:
/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ **Գ. Սիմոնյան** /

3.7. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում 2020-2021 ուստարվա լրավճարների տրամադրման մասին: / Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար **Մ. Աթոյան** /

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝

- Հաստատել նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u> **՝** «Հաղորդում 2021թ.-ի ընդունելության արդյունքների մասին» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Նա նշեց, ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպված արշավները մարզի դպրոցներում տվել են իրենց արդյունքները:

2021-2022 ուստարում ԵՊՀ ԻՄ-ը **բակալավրի առկա** ուսուցմամբ ընդունելությունն իրականացրել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված 11 մասնագիտությունների՝ 12 կրթական ծրագրերով: Ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմում-հայտ է ներկայացրել 236 դիմորդ: Հայտագրված դիմորդների 96%-ը /225 դիմորդ/ կազմել են Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտները: Ընդունելության քննությունների արդյունքներով ընդունվել է 198, իսկ հրամանագրվել՝ 185 ուսանող: Ըստ կրթական ծրագրերի եղել է հետևյալ պատկերը.

- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագրի առաջին հայտով ԵՊՀ ԻՄ է դիմել 38, իսկ թափուր տեղերի մրցույթով՝ 1 դիմորդ: Քննությունների արդյունքում ընդունվել են 34-ը:
- Ֆինանսներ (ըստ ոլորտի) կրթական ծրագրի առաջին հայտով դիմել է 27 դիմորդ, ընդունվել է 19-ը:
- Զբոսաշրջություն կրթական ծրագրի առաջին հայտով դիմել է 28 դիմորդ, ընդունվել է 21-ը:
- Անգլերեն լեզու և գրականություն կրթական ծրագրի առաջին հայտով դիմել է 33 դիմորդ, ընդունվել՝ 31-ը:
- Ֆրանսերեն լեզու և գրականություն կրթական ծրագրով դիմած 6 դիմորդները ընդունվել են:

- Ռուսաց լեզու և գրականություն կրթական ծրագրի առաջին հայտով դիմել է 12, իսկ երկրորդ փուլով՝ 3 դիմորդ։ Քննությունների արդյունքում ընդունվել են 14-ը։
- Հայոց լեզու և գրականություն կրթական ծրագրով դիմած 14 դիմորդները ընդունվել են։
- Տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրի առաջին հայտով դիմել է 21 դիմորդ։ Քննությունների արդյունքում ընդունվել են 19-ը։
- Հոգեբանություն կրթական ծրագրի առաջին հայտով Մասնաճյուղ է դիմել 17, իսկ երկրորդ փուլով՝ 1 դիմորդ։ Քննությունների արդյունքում ընդունվել են 14-ը։
- Պատմություն կրթական ծրագրի առաջին հայտով դիմել է 19 դիմորդ, ընդունվել՝ 11-ը։
- Դիզայն կրթական ծրագրի առաջին հայտով դիմել է 9 դիմորդ, ընդունվել՝ 8-ը։
- Դեկորատիվ-կիրառական արվեստ կրթական ծրագրի առաջին հայտով դիմած 7 դիմորդները ընդունվել են։

	Առկա	**Դիմել են 1-ին հայտով**	**թ/տ, կամ 2-րդ փուլով**	**Ընդունվել են**	
				Քան.	**%**
1	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	38	1	34	87.2%
2	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	27		19	70.4%
3	Զբոսաշրջություն	28		21	75.0%
4	Անգլերեն լեզու և գրականություն	33		31	93.9%
5	Ֆրանսերեն լեզու և գրականություն	6		6	100.0%
6	Ռուսաց լեզու և գրականություն	12	3	14	93.3%
7	Հայոց լեզու և գրականություն	14		14	100.0%
8	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	21		19	90.5%
9	Հոգեբանություն	17	1	14	77.7%
10	Պատմություն	19		11	57.9%
11	Դիզայն	9		8	88.9%
12	Դեկորատիվ-կիրառական արվեստ	7		7	100.0%
	Ընդամենը՝	***231***	***5***	***198***	***83.9%***

Բակալավրի հեռակա ուսուցմամբ ընդունելությունն իրականացվել է 6 կրթական ծրագրերով: Ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմում-հայտ է լրացրել 135 դիմորդ: Քննությունների արդյունքով հրամանագրվել է 113 ուսանող:

- Ֆինանսներ (ըստ ոլորտի) կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգ դիմել է 31 դիմորդ, ընդունվել՝ 25-ը:
- Զբոսաշրջություն կրթական ծրագրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգ դիմել է 36 դիմորդ, ընդունվել՝ 26-ը:
- Հայոց լեզու և գրականություն կրթական ծրագրով դիմած 1 դիմորդը չի կարողացել ստանալ դրական միավոր և չի ընդունվել:
- Տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգ դիմած 18 դիմորդները ընդունվել են:
- Հոգեբանություն կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգ դիմել է 32 դիմորդ, ընդունվել՝ 30-ը:
- Պատմություն կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգ դիմել է 17 դիմորդ, ընդունվել՝ 14-ը:

	Հեռակա	**Դիմել են**	**Ընդունվել են**	
			Քան.	**%**
1	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	31	25	80.6%
2	Զբոսաշրջություն	36	26	72.2%
3	Հայոց լեզու և գրականություն	1	0	0.0%
4	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	18	18	100.0%
5	Հոգեբանություն	32	30	93.8%
6	Պատմություն	17	14	82.4%
	Ընդամենը	***135***	***113***	***83.7%***

2021-2022 ուստարում ԵՊՀ ԻՄ-ի **մագիստրատուրայի հեռակա** ուսուցմամբ ընդունելությունն իրականացրել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով:

Ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմում-հայտ է ներկայացրել **16 դիմորդ**, որոնց մեծ մասը/**14 դիմորդ**/ կազմել են ԵՊՀ ԻՄ շրջանավարտները: Ընդունելության քննությունների արդյունքներով **ընդունվել 15** և հրամանագրվել է **14 ուսանող:**

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ-ի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, աշխ.գիտ թեկնածու, դոցենտ Գ. Հովհաննիսյանը և այլոք։

Մասնավորապես Գ.Հովհաննիսյանը նշեց, որ Զբոսաշրջություն մասնագիտությամբ ընդունելության ցուցանիշները այս տարվա համար բավարար են, սակայն ՀՀ ԿԳՄՄՆ կողմից ընդունելության քննություններում կատարված փոփոխությունները կարող են լուրջ մտահոգությունների պատճառ դառնալ 2022թ. ընդունելության համար, պետք է խնդիրը բարձրաձայնել։

Ա. Մակարյանը նշեց, որ այդ հարցը ԵՊՀ-ն բարձրաձայնել է, սակայն դեռ որևէ արձագանք չկա։

Որոշվեց.

- Ընդունել ի գիտություն։

<u>Օրակարգի երկրորդ</u>՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանի** հաղորդումը։

Ա.Մակարյանը մանրամասն ներկայացրեց 2022թ. ծախսերի նախահաշիվը (տես հավելված 1)։

Նա մասնավորապես նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. բյուջեով նախատեսված է ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների աշխատավարձերն ավելացնել միջինում 10%-ով, և հետագայում ևս կիրականացվի աստիճանական բարձրացում՝ ԵՊՀ ԻՄ-ի դասախոսների աշխատավարձերը մոտեցնելով ԵՊՀ-ի դասախոսների աշխատավարձերի չափին: Ինչ վերաբերում է ուսումնաօժանդակ և վարչական աշխատակիցների աշխատավարձերին, ապա դրանք, Մայր բուհի հետ համեմատած, բարձր են:

Ա.Մակարյանը նշեց, որ 2022թ. նախահաշվում մեծացել են ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը՝ հանձնարարվել էր բոլոր բաժիններին ԵՊՀ ԻՄ-ի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժին ու հաշվապահություն ներկայացնել, թե տարվա կտրվածքով ինչ է անհրաժեշտ իրենց ստորաբաժանումներին: Ներկայացված հիմնական գնումների պահանջ-առաջարկները ևս ներառվել են նախահաշվում. միայն վերանորոգումների հետ կապված շինանյութի արժեքը կազմել է շուրջ 8 միլիոն ՀՀ դրամ: Ավելացվել են նաև նոր հոդվածներ՝ փաստաթղթերի արխիվացման, նախագծերի և չափագրման ծառայությունները, որակի ապահովման գործընթացի ծախսերը, հակահրդեհային ազդանշանային սարքավորումների ձեռքբերման ծախսերը։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 55/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 11-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2022 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծին համաձայն հավելված1-ի:
2 Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2022 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվը ներկայացնել ԵՊՀ հաստատման:

Ընթացիկ հարցեր:

3.1 Լսեցին «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ մինչև հաստատման ներկայացնելը կարգը շուրջ մեկ տարի փորձարկվել է ԵՊՀ ԻՄ-ում: Նպատակն է օգնել հետազոտական աշխատանք կատարողին և ղեկավարին: Ն.Գրիգորյանը նշեց, որ սույն կարգը մշակվել է «ԵՊՀ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգի (12.03.2020, ԵՊՀ ԳԽ) հիման վրա, այնուհետև ընդհանուր գծերով ներկայացրեց կարգի հիմնական կառուցվածքային մասերը՝ «Ընդհանուր դրույթներ», «Հետազոտական աշխատանքի նպատակն ու խնդիրները», «Հետազոտական աշխատանքի խորհրդատվություն, ղեկավարում և կատարում», «Հետազոտական աշխատանքի կառուցվածքային տարրերը և բովանդակության վերաբերյալ հիմնական պահանջները», «Հետազոտական աշխատանքի ձևավորման տեխնիկական պահանջները», «Հետազոտական աշխատանքի գնահատումը», «Կարգի հաստատման և փոփոխության կարգը» (Հավելված 2):

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ-ի բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռ.Բարխուդարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ.Սիմոնյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ.Միքայելյանը և այլոք:

Մասնավորապես Գ.Սիմոնյանը և Մ.Միքայելյանը նշեցին, որ հատկացվող ժամաքանակը՝ 0,5 ժամ մեկ ուսանողին կիսամյակում, քիչ է համեմատած

ներկայացվող պահանջներին և թղթավարությանը, իսկ Ա. Մակարյանը և Ռ.Բարխուդարյանը նշեցին, որ ԵՊՀ-ում նույնպես այդ հարցերը բարձրաձայնվել են, սակայն այդ թվերը պատահական չեն և փորձը ցույց է տալիս, որ բավարար են, կան բուհեր որ դրա համար ժամաքանակ չեն տալիս։

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 55/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգը, համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3.2 Լսեցին «ԵՊՀ ԻՄ-ի փաստաթղթաշրջանառության կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյանի** հաղորդումը։

Նա նշեց, որ կարգը մշակվել է ՀՀ գործող օրենսդրության, նորմատիվ այլ իրավական ակտերի, ԵՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունների հիման վրա։ Ն. Գրիգորյանը ներկայացրեց կարգի հիմնական դրույթները (Հավելված 3)։ Նա նշվեց նաև, որ կարգը քննարկվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովում։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 55/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի փաստաթղթաշրջանառության կարգը, համաձայն հավելված 3-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3.3. Լսեցին՝ «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը:

Մ.Ճաղարյանը մասնավորապես նշեց, որ տվյալ կանոնակարգով սահմանվում են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի հիմնական խնդիրներն ու գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Այն բուհի որակի ներքին ապահովման համակարգի գործընթացները կանոնակարգող փաստաթուղթ է: Կանոնակարգը մշակված է ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության, ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգի, Կրթության բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության հիման վրա:

Որակի կառավարման մշտական հանձնաժողովը ԵՊՀ ԻՄ-ի որակի ապահովման գործընթացները կառավարող մարմին է, որի հիմնական նպատակը Մասնաճյուղում որակի մշակույթի ձևավորումն ու զարգացումն է, որակի ընդհանրական կառավարման (TQM) մոդելի ներդնումը, կրթական համակարգի բարելավումը և աստիճանական համապատասխանեցումը հավատարմագրման պետական չափանիշների պահանջներին, որակի ապահովման ոլորտում ՌԾ-ից բխող խնդիրների լուծման կազմակերպումը:

Բաց քվեարկությամբ՝ 22 կողմ, 1 դեմ, 2 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 55/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել 2015թ. հոկտեմբերի 31-ին կայացած ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի կանոնակարգը:
2. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կանոնակարգը, համաձայն հավելված 4-ի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3.4. Լսեցին՝ «ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ տվյալ կանոնակարգով սահմանվում են ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում որակի կառավարման հանձնաժողովի լիազոր-ներկայացուցիչների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Այն բուհի որակի ներքին ապահովման համակարգի գործընթացները կանոնակարգող փաստաթուղթ է: Կանոնակարգը մշակված է ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության, ԵՊՀ-ի որակի ապահովման հայեցակարգի, Կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության, ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կանոնակարգի հիման վրա:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 55/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել 2015թ. հոկտեմբերի 31-ին կայացած ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործունեության կանոնակարգը:
2. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործունեության կանոնակարգը, համաձայն հավելված 5-ի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3.5. Լսեցին՝ «ԵՊՀ ԻՄ –ի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին» ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը**:**

Նա ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու մասին նույն հանձնաժողովի նախագահի առաջարկը՝ որակի կառավարման մշտական հանձնաժողովի անդամ Digital Wave ծրագրավորման կենտրոնի տնօրեն Արտաշես Թովմասյանի փոխարեն հանձնաժողովում ընդգրկել «ԷԼ ԹԻ ՔՈԴԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն Լիանա Ծատուրյանին (Ա. Թովմասյանը, Իջևանից տեղափոխվելու պատճառով, չի կարողանում մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին):

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 55/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 16-րդ կետի 16-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմից հանել Digital Wave ծրագրավորման կենտրոնի տնօրեն Արտաշես Թովմասյանին:
2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում հաստատել «ԷԼ ԹԻ ՔՈԴԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն Լիանա Ծատուրյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

3.6 Լսեցին՝ «Ջ.Լ.Սրապիոնյանի և Ա.Ա.Թադևոսյանի «Օգնություն դիմորդին» (Մաթեմատիկայի պետական ավարտական միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան 1,2-ի արտահայտությունների ձևափոխությունների և արժեքների հաշվման խնդիրների լուծման ուղեցույց խնդրագիրք) ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին» ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ **Գ. Սիմոնյանի** հաղորդումը:

Գ. Սիմոնյանը նշեց, որ սույն ձեռնարկը երաշխավորելու գործընթացը սկսվել է դեռևս մայիս ամսից: Այն նախատեսված է հանրակրթական դպրոցի շրջանավարտների և ուսուցիչների համար, նպատակ ունի օգնելու սովորողներին՝ տիրապետելու մաթեմատիկայի որոշ թեմաների տիպային վարժությունների լուծման մեթոդներին: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև բնագիտական ֆակուլտետի ուսանողների համար: Ուսումնամեթոդական ձեռնարկը գրախոսվել է նաև ԵՊՀ ԻՄ-ի ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. դոցենտ Մ. Զաքարյանի կողմից, որ սույն բնագավառում ունի բազմամյա դրական փորձ: Աշխատանքը քննարկվել է բնական գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդում և «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնում:

Արտահայտվեցին՝ «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մ.Միքայելյանը, «Տուրիզմի և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Հովհաննիսյանը և այլոք:

Նշեցին, որ աշխատանքը ուղարկվել էր բոլորին, հնարավորություն են ունեցել մանրամասն ծանոթանալ բովանդակությանը և կառուցվածքին: Նրանք գոհունակություն հայտնեցին կատարված աշխատանքի վերաբերյալ: Նշվեց, որ այն

կարող է օգտակար լինել համապատասխան մասնագիտությամբ դիմորդներին, ուսանողներին և դասախոսներին։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 55/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել հրատարակության Ջ. Լ. Սրապիոնյանի և Ա. Ա. Թադևոսյանի «Օգնություն դիմորդին» (Մաթեմատիկայի պետական ավարտական միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան 1,2-ի արտահայտությունների ձևափոխությունների և արժեքների հաշվման խնդիրների լուծման ուղեցույց խնդրագիրք) ուսումնամեթոդական ձեռնարկը։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

3.7 Լսեցին՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում 2020-2021 ուստարվա լրավճարների տրամադրման մասին» ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար Մ.Աթոյանի հաղորդումը։

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտխորհրդի՝ 2019թ. դեկտեմբերի 28-ի նիստի թիվ 42/5 որոշմամբ հաստատվել է ԵՊՀ ԻՄ աշխատակիցներին լրավճարների տրամադրման կարգը։ 2019-2020 ուստարվա լրավճարների համար ԵՊՀ ԻՄ-ի բյուջեում նախատեսվել էր 2 միլիոն ՀՀ դրամ, որից ԵՊՀ ԻՄ-ի հիմնական աշխատողների 5 աշխատանքի և մեկ դոցենտի գիտական կոչում ստանալու համար վճարվել է 475 հազար ՀՀ դրամ: 2020-2021 ուստարվա համար նույնպես նախահաշվում հատկացվել էր 2 միլիոն ՀՀ դրամ:

Մասնաճյուղում գործող 10 ամբիոններից միայն 5 ամբիոններից են ներկայացվել աշխատանքներ հավելավճար ստանալու համար։

Դրանք են՝

1 **ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ.** 3 աշխատակից ներկայացրել է 5 հոդված, մեկ աշխատակից ստացել է **գիտությունների թեկնածու գիտական աստիճան**, մեկ աշխատակից՝ **դոցենտի կոչում**։

2 **ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ.** մեկ աշխատակից ներկայացրել է մեկ հոդված:

3 **ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ.** մեկ աշխատակցի կողմից ներկայացվել է երեք աշխատանք, որոնք **սակայն չեն բավարարել** գործող համապատասխան կարգի պահանջներին հավելավճար ստանալու համար:

4 **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ.** երեք աշխատակցի կողմից ներկայացվել է 5 հոդված, **որոնցից միայն մեկն է** բավարարել գործող կարգի պահանջներին՝ **հոդված արտասահմանյան ազդեցության գործակցով** պարբերականում:

5 **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ.** մեկ աշխատակից ներկայացրել է 2 աշխատանք:

Նշենք, որ անցած ուստարում նույնպես եղել են աշխատանքներ, որոնք չեն բավարարել գործող կարգով լրավճար ստանալու պահանջներին, այդ իսկ պատճառով, արդյունավետ կլիներ, որպեսզի ամբիոնի վարիչները ամբիոններում քննարկեին գործող կարգը և աշխատակիցներին ուղղորդեին, որպեսզի նրանց աշխատանքները հնարավորության դեպքում հրատարակվեին այնպիսի պարբերականներոում, որոնք նշված են մեր գործող կարգում, կամ ներկայացնեին առաջարկություններ կարգում փոփոխություններ կատարելու համար, որպեսզի հետազոտությամբ զբաղվող մեր բոլոր աշխատակիցները ստանային հավելավճար: Մյուս կողմից լավ կլիներ, որ հետազոտական աշխատանքների տվյալները աշխատակիցների կողմից ներկայացվեին հնարավորինս հստակ և հղումներով, նշելով նաև, թե գործող կարգի որ կետին է բավարարում՝ հետագա թյուրըմբռնումներից խուսափելու համար:

Արտահայտվեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանը**, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գ.Հովհաննիսյանը** և այլոք:

Մասնավորապես **Ա.Մակարյանը** նշեց, որ դեմ է պահանջների մեղմացմանը, իսկ ԵՊՀ–ում նախատեսվում է համապատասխան կարգի վերանայում, որից հետո մենք նույնպես կանդրադառնանք սույն կարգին:

Որոշվեց.

- Ընդունել ի գիտություն:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ